Ը. Ի 1860 ամի, բանաւոր հրամանաւ Մատթէոս կաթուղիկոսի, պատրաստեցի և բացի յՕշական զուրբ Մեսրովբեան դպրոցն առ եկեղեցեաւն և ապա, մեծաջան աշխատութեամբ Նսայի Աւ. քահանայի Ամատունւոյ և պ. Մկրտչի Մօրիկեանց շարունակեցաւ և շարունակի ցայսօր (1896)։

Թ. Ի 1860 ամի, Սինոդն գրութեամբ յ3-ն յունվարի № 7, յանձնեաց ինձ նաեւ զվանահայրութեան պաշտօնն Ս. Գէորգայ վանից Մոզնւոյ, կից ընդ գործակալութեան Էջմիածնի գաւառի, ուր և շինեցի զարեւելեան վերնայարկ սենեակն՝ յանուն վանական դպրոցի և զպարտէզն։

Ժ. Ի 1860 ամի, Տ. Մատթէոս կաթուղիկոսն կոնդակաւ ի 20 յունվարի հմր. 51, շնորհեաց ինձ վասն պաշտօնավարութեանս գործակալութեան Էջմիածնի գաւառի զմեսաքսեայ ծաղկեայ կապոյտ փիլոն։

ԺԱ. Ի 1861 ամի, Սինոդն հիմնեալ ի վերայ կոնդակի Տ. Մատթէոս կաթուղիկոսի ի 26 յունվարի հմր. 21, գրութեամբ ի 17-ն յեսադայ փետրվարի № 299, կարգեաց զիս կառավարիչ արտաքին և առանին վանքական գործոց Մայր Աթոռոյս։

ԺԲ. Ի 1861 ամի, Տ. Մատթէոս կաթուղիկոսն կոնդակաւն ի 16 մայիսի հմրւ. 266, շնորհեաց ինձ վասն պաշտօնավարութեանս կառավարչական գործոց Մայր Աթոռոյս զվարդապետական անուանեալ ականակուռ խաչ։

ԺԳ. Ի 1862 ամի, Սինոդն գրութեամբ ի 12-ն յունվարի № 57, կարգեաց զիս գործակալ Նոր—Բայազիտ քաղաքի և գաւառի Նորա 73 հայաբնակ գիւղօրէից (սկսեալ ի Քանաքեռ գեղջէ ցՀիբուխլի գիւղն՝ ընդ հիւսիս, և ցԲասարգեչար գիւղն՝ ընդ արեւելս)։

ԺԴ. Ի 1864 ամի, գրութեամբ Սինոդի ի 1-ն յունիսի համարաւ 696, կարգեցայ վանահայր Ս. Ստեփաննոս Նախավկայի վանից Զամբայ, որ յայնկոյս Երասխայ՝ ի Մաղարդայ լերին՝